# ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԵՐ ԶԱՐԵՀ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՏԵՐ ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

## ՎԵՀԱՓԱՌ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հանույքով հաղորդում ենք Ձերդ Վեհափառության՝ միաբանության անունից Խադ արքեպիսկոպոսի Կաթողիկոսական տեղապահ ընտրվելու մասին:

Միաբանական ժողովի նախագահ՝
ԶԱՐԵՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Բեյրութ, 1 հուլիսի 1952 թ.

## ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՏԵՂԱԿԱԼ ԽԱԴ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ — ԲԵՅՐՈՒԹ (ԼԻԲԱՆԱՆ)

Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոսի կարգումը Ձեզ՝ ի կենդանության՝ Ընդհանուր Տեղակալ՝ նշանակ է նորա առ Ձեզ տածած վստահության և իմաստուն կարգադրության: Աթոռիդ միաբանության կատարած ընտրությունը՝ գրավական է նորա խոհական և համերաշխ գործունեության: Հայ եկեղեցական Աթոռները, եպիսկոպոսները և վանական ծայրագույն վարդապետները՝ իրենց բարձրագույն դպրոցներով՝ զարգացրել են Հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նորա պայքարող ոգին հանուն Ազգի և Հայրենիքի, վառ ու կենդանի են պահել նորա մեջ հավատարմության զգացմունքը Հայ Եկեղեցուն, նորա եկեղեցական դավանանքին և ազգային ու կրոնական սովորույթներին. սույնպես նաև ջանք չեն խնայել պահպանելու նորա ֆիզիկական գոյությունը, որի շնորհիվ Հայ Ազգը կենդանի է մնացել ցայսօր:

Այսօր, միջազգային փոխհարաբերությանց չափազանց լարված պայմաններում, Հայ Եկեղեցու ղեկավարներից, վարից վեր, պահանջվում է միություն և համերաշխ գործունեություն, մեր նախնյաց անձնվեր նվիրվածությունը Ազգին և Եկեղեցուն, այլև մեր Ազգի հատվածյալ բեկորների ամբողջացում ազգահավաքության միջոցով, ամբողջական կուռ միություն Հայրենի Երկրում:

Աղոթենք Բարձրյալին, որ պարգևե մեզ բոլորիս կար և ույժ, պահպանե մեր հավատարմությունը՝ Հայ Պատմությամբ մշակված վերոհիշյալ ազգային ավանդներին, որպեսզի արժանանանք Հայ ժողովրդի գոհունակության ու օրհնենքին և օտարների հարգանքին:

Աստվածային օրհնությունն ենք հայցում Ամենապատվությանդ, Աթոռիդ միաբանության և հավատացյալ Հայ ժողովրդի վերա:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

11 հուլիսի 1952 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ